

ԻՄ ՀՈՒՇԵՐԻՑ

Ա.

ՍԱՇԿԱ. ԴԱՎԻԴԻՆ

Այս ուսանողության օրերին,
1879—1882 թվականներին,
Մոնկվայում մի հայ երիտա-
սարդ էր ապրում, որ ուսանե-
լու էր եկել: Ծնորհալի էր նա ու արևելյան
գեղցիության տեր.— բոյ-բռասաթ, սևա-
թուր մազեր, վասլուս, աչքեր, կամար ու
թուխ հոնքեր, սիրում ու կոկ կեցվածք,
քաղցրահնչուն ճայն ունեցող կրակ ու բոց
երգիչ էր նա: Մալրաքաղաքի բուժոնդի մեջ
հոչակ ուներ նա, սիրուն աղջիկներին ու գե-
ղանի կանանց խելքամւզ անել գիտեր...
Ո՞րն ասեմ, ո՞րը, մի խոսքով սրտակեղ,
սրտակեր մի երիտասարդ:

Մեղ անհայտ է, թե կոնսերվատորիան ա-
վարտել էր նա, թե ոչ, բայց ճայնը մշակել
էր: Նա իր համար ոտեղել էր երգելու ինք-
նութունը մի ժամը, որի համապատասխան
էլ երգեր էր ընտրում, իսկ երբեմն էլ գրել
պատվիրում... Նրա սիրած երգն էր «Օչի
շերին, օչո յերշո» երգը ու դրա հար ու նր-
ման այլ երգեր:

Երգելու պահերին քաղցր ժամանք խաղում
էր նրա զեմքին: Նա երգում էր խորը զգաց-
մունքով և երգի հմայիչ հնչուններով ապ-
րում ու աօրեցնում իր սմնինքիներին: Նրա
ճայնը բարձր նոտաներում կարկաչում էր
հորդահով վտակի նման, իսկ ցածր նոտանե-
րում խոփոշում լինաղբյուրի նման:

Ետո ենք լսել նրա երգերը, սակայն, ո՞վ
կարող է նկարագրել այն ինովանքն,
այն համակ քաղցրաթյունը, որ պարուրում
էին մեր սրտերը նրան ամեն անգամ՝ ուն-
կընքինուց: Նրա մելանուլը ճայնը մերի
գեղգեղում, ճախրում էր բարձր սլորանե-
րում, մերի քաջցանուր կայլայլում ու մերի
նվազում; ծորա՛մ և թանձրորին ծավալվե-

լով սփռվում: ոչ մի կեզծ հնչուն, ոչ մի
արհեստականություն, նրա զինջ ու վճիռ
ձայնը խորապես հուզում էր ունկնդիրներին,
պատմում նրանց կանքի, գգվանքի ու եր-
շանկության մասին: Դաշնիճի քար լսության
մեջ նրա ձայնի ալիքները ծովի խայտացող
ալիքների նման հեղաձկուն տարածվում էին
ափերից դեպի հեռաները: Բայց հենց որ օ-
գում մարտում էին նրա ձայնի վերջին հնչուն-
ները, դաշնիճի քար լսությունը վայրկեննա-
պես փոխարեւում էր խոռվահուզ ծովի: ո-
րությունուստ կեցցեների, խելահեղ ծափերի
բուռն ազմուկը փոփորկում էր դաշնիճը:

— Բռավո՛ Սաշկա, բռավո՛ Դավիդով:

Բեմը լցովում էր երիներանդ ծաղկեփնչե-
րով:

Երիտասարդ ջնորհալի երգչի անունը Ա-
լեքսանդր էր, ազգանունը Դավիթյան: Մասկ-
վայի հասարակայնությանը նա հենց այդ
անունով էլ հայտնի էր, բայց ոռապական
ձևի փոխված ու ժողովրդականացած—Սաշ-
կա Դավիդով ձևով:

Եօ նրա հետ ծանոթացել էի հորեղբորա՝
բանաստեղծ Մբատ Շահազիզի տանը, որը
նա լինում էր երգեմն: Հորեղբայրս ինձ նրա
հետ ծանոթացնելով ասաց:

— Մանոթացիր, սա մեր հայրենակիցն է,
երգիչ Դավիդովը, անշուշտ լսած կինս նրա
անունը:

Շատ համեստ մարդու տպավորություն
թողեց իմ վրա, այնինչ նրա համբավը ան-
շափ մեծ էր ու տարածված: Նրա հաշողու-
թյունների մասին հրաշքներ էին պատմում:

Որպես համբավալոր երգիշես նրան լավ
էի ձանաշնում, բայց թե ո՞վ էր նա, ի՞նչպես
էր մեր հայրենիքից Մոնկվա ընկել, այդ
մասին նմանաւոր կցկոտով՝ տեղեկություններ
ունի: Հորեղբայրս էլ, կարծեմ, նրա մասին

շատ բան չքիտերու Շատ թե քիչ հավաստի աղջուըրներից տեղեկացնել էր, որ նա վաղարշապատցի էր. լավ ձայն ունենալով նա հայրենի դրույթից հեռացնել էր բախտ որոնելու հպատակով ու առաջին անգամ ընկել թիֆիս, որ հայ եկեղեցիներից մեկում տիրացվի պաշտոն է վարել. Մի օտարազգի. Հավանորեն տուրիստ, մտնում է եկեղեցի հայկական պատարագ լսելու համար. լսելով ամբացվի ախորժալուր ձայնը, օտարականն այնպես է հմայվում, որ մնում է եկեղեցում մինչև պատարագի վերջանալի, ծանոթանում շնորհայի տիրացվի հնու ու ապա նրան իր հետ Մոսկվա տանելով, հոգում նրա ձայնի մշակման մասին:

Իմ ծանոթությունը տաղանդավոր երգչի հետ հարեւանցի էր ու գեր երկար ժամանակ էլ այդպես հարեւանցի մնաց:

Տարիներ անցան:

Ես նոր նախիջեանի հայոց թեմական դրացում տարիներ շարունակ արդեն ուսուցչի պաշտոն էի վարում, երբ մի վերջին անգամ էլ հանդիպեցի նրան նոր նախիջեանում ու, բնականաբար, մեր ծանոթությունը նորոգվեց: Խնչուն երկում էր, նա առաջին անգամը չէր, որ այցելում էր այլ շեն հայ դաղութիք, որովհետեւ ծանոթ էր նախիջեանցոց բարբառին, դիտեր ու ճաշակով երգում էր նրանց, իրենց հետ Դրիմից բերած, երգերը, ինչպես օրինակ՝ Ալ գելինը, Օյին-համան, Ղալմուհի-հավան, Զալ ձիին-հավան, Պատին տակը, և այլն:

Նա վարձել էր քաղաքային պարտեզը, ուր գտնվում էր հայոց Ս. Գևորգ եկեղեցու մոտ, նոր նախիջեանից Ռուսության տանրդ մհծ ճանապարհի վրա և հարմարություն ուներ երկու քաղաքների բնակիչների այցելության համար, ուրեմն և որոշ շակով գործն ապահովված էր եկամտի տեսակետից:

Նա իր հետ բերել էր երկու շատ վարպետ չութափահար ու կազմակերպել ընտիր նվագախումբ, որը կարող էր բաշխարարել ամեն մի երաժշտասեր հասարակության պահանջներին:

Այսպիսով, գործի հաջողության համար ամեն ինչ լիակատար էր, և ծառազարդ ու ծաղկազարդ պարտեզը, և երկու անվանի չութափահարները, և լավագույն օրիկեստը, և երգի համբավը, սակայն պականում էր այդ համբավի իսկական տերը, Սաշկա Դավիդովը, կրակ ու բոց երգի Դավիդովը, որի մընացորդը, միայն ստվերն էր ներկա: Անողոք ժամանակը, տարիները դրել էին նրա վրա իրենց անշնչելի կնիքը, շոշափելի դրոշմը: Նա ծիրան ծիրան էր երգել էր շարժածքը դրձել:

Եր դանդաղ, գեմքը թորշումել, մազերն ալեհառնվել, բայց այդ բոլորը զեռ ոչինչ փառավոր ստվերը, պատկառելի մնացորդն էլ զեռ մի բան արժեին: Գլխավորն այդ չէր. զիմավորը, և մենք կասենք ողբերգականը, այն էր, որ նա կորցրել էր ընդմիշտ իր ունկը ընդմիշտին թովով ու գերող ատշնը... Ուր էր այն կարկաչուն աղբյուրը, այն խոխոչուն առվակը, ուր այն ծորուն ու ծավալուն քաղցր մեղեղին... Նա այլևս անկարող էր բարձր երգել նա երգում էր բեշխատիվով...

Հիշում եմ այդ օրը. Նոր նախիջեանի մայիսյան սիրուն, արեւա օրերից մեկն էր. այդ օրը նշանակված էր պարտեզի բացումը և համբավավոր երգիչը իր առաջին ելույթը պիտի ունենար երկու գաղաքի ընտիր հասարակության առաջ: Ժամը տասին արդեն այնքան մարդ էր հավաքվել, որ հանդիսատեսների համար շարված բաղմաթիվ աթոռներն ու երկար նստարանները արդեն լինել զրագացված էին. սակայն մուտքի առաջ դեռ շարունակվում էր տոմսակների վաճառումը ու մարդկանց հոսանքը չեր դադարում: Վերջապես հնչեց զանգը և նվազախումբը սկսեց ինչ որ մի ուրախ եղանակ նվազել. նստելու տեղ շունչեցող մարդիկ խոնվեցին ու տեղավորվեցին, ով ուր կարող էր ժամը 12-ն էր, որութեան ժամանակ ծափերը, «ՎՐԵՄԱ» արագականը ու գնալով լաւցուցիչ էին դառնում: Բնիմի վրա, վլրչապես, երեւաց նա, որին սպասում էր հասարակությունը. Նա ուտից ցգուիս սպիտակ զգեստ ուներ վրան, իսկ երկար ճերմակ մազերը սանրված էին խնամքով: Մանոթ ժպիտը գեմքին, վարձ ձեւրով նա մի քանի քայլ առաջ եկավ, կանդնեց նվազախմբի մեջտեղը, գուկս խոնարհեց հասարակության ու սկսեց երգել իր սիրած երգերից մեկը, կարծեմ «Անորակ» աշխարհը: Նա երգում էր մեղմ, երգախառն դիշտատիվով, բայց այնպես քաղցր ու դուրեկան էր հնչում նրա երգը, որ հմայում էր ունկնդիմերներին. երբ վերջացրեց երգը, դարձյալ առաջված նման որութեան դուրս ծափահարությունների արժանացավ: Նույն հաջողությամբ նա մի քանի երգ էլ երգեց: Նա երգում էր մեշտնդմեջ, երգից հետո նվազախումբը ինչ որ եղանակ էր նվագում, ապա հանդես էին գալիս երկու վարպետ չութափահարները և այնուհետև նորից ինքը որևէ երգ էր երգում ու այդպես շարունակ...

Նրա վերջին երգը էր «Ալ գելինը», որի բառերն արդեն մոռացված են և պահպանվել է միայն սիրուն, սրտառուչ եղանակը. Հարսին տանում են իր հոր տնից ու նա լայն բաժանմում է իր ծնողներից: Այս երգը նա այնպես սրտառուվդ էր երգում, որ ուն-

կրնդիմների աշքերից արտասում էր քամում: Այնուհետև, որպեսզի լալուց հետո նոր-հասիշեանցոց ուրախացնի, նա մի վերջին անդամ էլ երգեց «Օյին-հավան», որը պարի եղանակէ. այդ պարերգը նա ֆրում էր շըվշըվացնելով, ու այնպիսի շարժումներով, որ թվում էր, թի ինքն էլ պարում էր... եվ իհարկե ստացվում էր մի շատ զավիշտական պատկեր, որ ֆուրոր էր անում:

Նա ամեն օր չէր երգում, շաբաթը մեկ կամ երկու անգամ. մնացած օրներին նվագում էր նվագախումբը ու հանդես էին զալիս երկու չութակահարները. այլպիսի օրերին ձեռքբարը գրանց դրած նա կանգնում էր ուստոն: դի մոտ ու լսում երկու շութակահարների նվազը. ինչպես երկում էր, նա շատ էր սիրում շութակի նվագը:

Այսպես շարունակվեց մինչև օգոստոս, մինչև սեպտեմբերի վերջը: Հասարակությունը շատ գոհ էր և եկամուտը նույնպես գոհացուցիչ էր, այնպես որ ոչ միայն իր ծախսերը ծածկեց, այլ և իրեն էլ որոշ գումար մնաց: Սեպտեմբերի փակումն էլ նույն հաջողությամբ տեղի ունեցավ, ինչ որ բացումը: Երինե-

րանդ ժաղկափնչերի հետ միասին նրան մի թանգարժեք ընծառ էլ մատուցվեց:

Հիշում եմ, թի ինչպես հրաժեշտի ժամանակ իրուղիւմ էր պատրաստվել ու մի տապա մարդ էլ բոլորվել էինք մնաս բարովի սեղանի շուրջը: Ենքը երգիւր շատ տիսուր էր, նա ասաց, որ հավանորեն սա իր վերջին ելույթը կլինի, որ ինքը չի ցանկանում խղված ձայնով հանդես գալ իր սիրած Մոսկվայի հասարակության առաջ, այն Մոսկվայի, որն իրեն սովորեցրել, փայտային, խրախուսել ու վարպետ երգչի համբավին էր արժանացրել:

— Ես իմ հայրենիքից կտրվել, հարազատացել եմ Մոսկվային. Մոսկվան իմ երկրորդ հարազատ հայրենիքն է դարձել, ես ընդմիշտ կմնամ այնտեղ, բայց խղված ձայնով այլևս հանդես չեմ գա իմ սիրելի մոսկվացիների առաջ,— ասում էր նա ուրիշըն յեզվով:

Նա թեև հայերենոր չէր մոռացել, բայց սովորաբար ուսւահերեն էր խոսում:

Ես այլևս դրանից հետո նրան չհանդիպեցի: Լսեցի, որ նա վախճանվել է, ճիշտը չեմ հիշում, 1911 թե 1912 թվականին,

Բ.

ՌԱՋԱՅԱՆՑԱԿԱՆ ԽԺԻՇԿ ՊՐՈՖԱՆՑԵՍՏ ՊԱՐԱԳՐԱՎ ՊՐՈՄԱՍԱՅ ՊՐՈՄԱՍՈՐ ՊՐՈՄԱՍՈՐ ԹՈՄԱՍՈՐ

Պատկանյանի նամակներից մեզ հայտնի է, որ նա յուր մահվանից մի տարի առաջ, 1891 թվի ամիսնը, բժիշկների խորհուրդով, մեկնել էր «Թթու-Զուր» (Կիսլավոդսկ), իր քրոնիկական բրոնխիտից բուժվելու համար, մի հիմանդրյան, որ այդ ժամանակները օրեցօր զարգանալով նրա օրգանիզմում արդին լուրջ վտանգ էր սպառնում նրա կյանքին:

1891 թվականին Կիսլավոդսկում շատ հայեր կային. ես էլ այնտեղ էի, Բոլորս էլ ճանաչում էինք Պատկանյանին. մեզնից շատերի համար նա անձնական ծանոթություն ուներ. սակայն, նրա ծանոթների մեջ, անկանկած, ամենանշանավորը Վարշավայի համալսարանի ուսուցչապետ բժիշկ Ղազարոս Թոոմասն էր, որը 1895 թվականին վախճանվեց Յալտայում, հենց այդ նույն հիմանդրյանից, որով տառապում էր Պատկանյանը և որից փրկել էր ուղղում նրան ինքը:

Մեկ օր երեկոյան, երբ երաժշտախումբը նվագում էր պարկում ու կուրորտավորները պարկ էին խոնվել, ես տեսա Պատկանյանին մի միջահասակ, բարակ-բարակ մարդու հետ զբանելիս: Երբ նրանք հասան՝ այն նստարանին, որի վրա ես էի նստած, Պատ-

կանյանն ինձ ձեռքով հրավիրեց ու ժանոթացրեց յուր ընկերուց հետ: Այդ ինձ անծանոթը Թոմասն էր. որը նոր միայն ծանոթացել էր Պատկանյանի հայտնի Ալեքսանդր Մանթայանի միջոցով:

Մենք սկսեցինք միասին զբունել. խոսում էր, ըստ սովորականին, Պատկանյանը, իսկ Թոմասը միայն պատասխանում էր նրա հարցումներին ու պարզաբանումներ անում: Խոսուովանում նմ, հենց առաջին հանդիպումից նա գրավեց իմ համակրությունը իր պարզությամբ, քաղցր վարվեցողությամբ, հստակ դատողությամբ ու վերին անտիճանի համեստությամբ: Նա խոսում էր ժամփը գեմքին ու ձայնի մի այնպիսի ախորժելի եւ լեզնիքը, որը հատուկ է միայն իսկական դիտնական անձանց: Թեև նա հայերեն լավ չէր խռում, բայց և այնպես աշխատում էր, մեզ հետ միայն ու միայն հայերեն խոսել, և անդադար խնդրում էր, որ մենք իր սխալներն ուղղենք: Պետք է ասեմ, որ երբեմն շատ զավիշտական պատկեր էր ստացվում, երբ նա աշխատելով դրական մաքուր լեզվով մի որևէ վերացական կամ գիտական միտք արտահայտել դժվարանում էր, չէր կարողանում ու սկսում էր

իրեն ծանոթ և հարազատ Հաշտարիսանի բառքար գործ պժել:

Այսուհետև ես նրան հաճախակի էի հանդիպում Պատկանյանի նևս միասին: Թոմասը թիւ և այն էլ ի միջի այլոց էր գործնական բժշկությամբ զբաղվում: առաջին անգամն էր նա Հյուսիսային Կովկասի հանքային ջրբերն այցելում: նա եկել էր այս անգամ տեղի պայմաններին ծանոթանալու համար միայն, որպեսզի հաջորդ տարում սեզոնի սկզբից հաստատվի հսկենուկում ու գործնական բժշկությամբ զբաղվի: Ամեն անգամ հանդիպելուց մենք երկար ժամանակ զրոյում էինք միայն սեզոնի ջամար միայն, որպեսզի հաջորդ տարում սեզոնի սկզբից հաստատվի հսկենուկում ու գործնական բժշկությամբ զբաղվի: Ամեն անգամ հանդիպելուց մենք պահարակելի սովորություն ունեն, բարձր դիրքի տիրանալուց գոռոզանալ, բարձրից նայել իրենց ազգակիցների վրա: Մակայն թոմասը զերծ էր այդ պահարակելի հատկությունից, նա իսկական, ազնիվ, մաքուր հայի տիպար էր. երկար տարիներ ապրելով օտարության մեջ ու օտարներով շրջապատված, նա իր սրտի ծալքերում անարատ պահել էր սերը դեպի հայ ժողովուրդը, հայ լեզուն, հայ գրականությունը: Նա ուրախանում էր հայոց դպրոցների հաջողություններով և հրճվում հայ գրականության օր ավոր զարգացումը տեսնելով:

Ապշեցուցիլ էր նրա վերաբերմունքը, նրա բյուրեղային, անշահախնդիր սերը Պատկանյանի հանդեպ. նա անպես էր գորգուրում, այնպիսի սիրով ու նվիրվածությամբ ըուժում և խնամում նրան, որ կարելի էր կարծել, թե Պատկանյանից զատ ավելի մըտերիմ, ավելի հարազատ մարդ չուներ այլևս: Նրանք միշտ անբաժան էին իրարից ու զրուսանքի էին ենում իրար հետ թևանցով: Կարծեմ նրանք մի հեռավոր ազգակցական կապ էլ ունեին միմյանց հետ, բայց նրանց այդ մտերմիկ հարաբերությունը, անկասկած, այդ հեռավոր ազգակցական կապի արդյունք չէր, այլ նախ և առաջ սիրո, համակրության ու հոգատարության, որ նա, իրու բժիշկ, տածում էր յուր բոլոր հիվանդների հանդպատճառարար, և երկրորդն ու ամենաբլիւավորը այն մեծ համարմունքի, որ նա ուներ Պատկանյանի մասին, իրու հայ մտքի և գրականության ներկայացուցիչ, իրու առաջնակագործ բանաստեղծի, և վերջապես այն հուահար կացության, որի մեջ գտնվում էր մեր բանաստեղծը:

Ես հաճախ Պատկանյանից ծածուկ թումասին հարցնում էի նրա հիվանդության մասին. նա միշտ էլ հուսահատությամբ պատասխանում էր, որ հույս չկա և որևէ բան անել անհնար ի, անգութ հիվանդությունն

ամեակես էր արմատավորվել նրա օրգանիզմում, որ բժշկականությունն անզոր էր նրա դեմ մաքառելու: Թոմասն ասում էր, որ ձմեռը նախիջևանում Պատկանյանին ապրել էր կարելի: Նա Պատկանյանին խորհրդարդ էր տալիս նպաստություն գնալու, իսկ եթե այդ անկարծիլ էր, գոնե Յալտա, Ղրիմի հարավային ափերը մեկնել: ու այս նպատակով էր մի բժշկական վկայական էր տվել նրան Արդեստավորաց դպրոց»-ի հոգաբարձության ներկայացնելու համար:

Եգիպտոս, Գահիբը, Յալտա, բայց ի՞նչ նյութական միջոցներով, ո՞ւմ գումարներով: Հի՞ որ Պատկանյանի նյութական միջոցներն այնքան սուր էին, որ նրա բնտանիթը նոր նախիջևանում ապրում էր կարուտովյան մեջ, իսկ ինքն էլ բուժվում էր հանքային ջրբերում «աննման» (ինչպես ինքն էր ասում) Գևորգի (Քանանյան), հազար մի ամունաթերովք և վիրավորական ակնարկներով իր արված չնշին օժանդակությամբ և մեկ էլ հսկենուկում նրա համար հավաքած մի փոքրիկ գումարով:

Յուր սիրելի բարեկամ Պատկանյանի մահից հետո թոմասը ապրել է և երեք տարի, որոնցից միայն մի տարին առողջ վիճակում, իսկ իր կյանքի վերջին երկու տարում տառապել է թոքախտից, որից բուժվելու համար մի տարին անց է կացրել արտասահմանում, իսկ վերջին տարին էլ Յալտայում:

Կիսլավոսկուց հետո ես երկու անգամ էլ հանդիպեցի թոմասին, մեկ անգամ նոր-Նախիջևանում՝ ուրախ, առողջ վիճակում, մյուս անգամն էլ Յալտայում՝ հիվանդ, հուսահատ վիճակում: Հիշում եմ թե ինչպես նոր-Նախիջևան եկած ժամանակ նրա մոտ ծանոթներից ու բարեկամներից մի քանիսը ի պատիվ նրան Ս. Խաչ վանքի պարտեզում համեստ ճաշկերություն սիր սարքել: Նա այն ժամանակ առողջված էր գործելու մեծ եռանդով, ապագայի վառվուն հույսերով և աշտաքուատ չէր նկատվում, որ նրա ներսում կամաց-կամաց զարգանում է հիվանդությունը, որը շուտով պետք է ստիպվեր նրան դադրեցնել ոչ միայն եռանդուն գործունեաթյունը, այլ և առհասարակ ամեն մի գործունեթյունը:

Ճաշկերությն անցավ շատ ուրախ: Ուկորված ճառանքը արտասանվեցին, փրփրակեզ բաժակներ գատարկվեցին այդ բարի ու մեծ ապագա խոստացող մարդու կենաց համար: Երբեք շեմ մոռանա մի գեպք, որ պատահեց այդ ճաշկերությի: Ժամանակի Շտարազգի հյուպերից մեկը բաժակ բարձրացրեց և զան-

կովբյուն հայտնեց, որպեսզի ապագայուն բոլոր ազգերը ձուլվեն ի մի և մարդկությունը մի մեծ ընտանիք կազմե, առանց ազգի, ինքի ու կրոնի խարության: Թումասը անվըրդով, մպիտն երեսին խմնց արդ կենաց բաժակը և ապա ինքն էլ իր կողմից առա-

լի էր տեսնել, թի ինչպիս թոքախոտը երկու տարվա ընթացքում մաշել ու քամել էր նորան: Յալտայում իմ տեսած Թումասը այլև նման չէր կիսլավոզսկում և նոր-նախիչհանում տեսածս Թումասին: Նրա առանց այն էլ վտիտ մարմինը բոլորովին փոքրացել ու



Թափայել Պատկանյանը և պրոֆ. Ղազարոս Թումասը

շարկեց խմել կենաց բաժակ հանուն հայ ազգի զարգացման, բարգավաճման ու պայ-

սեղմվել էր, գեմքը սեացել, մաշել կնճռոտվել, աշքերը փոս ընկել: Կարելի է ասել, Թու-

մասից ոսկորն ու կաշին էր մնացել: Սակայն անփոփոխ էօ մնացել նրա մոտ մի քան,— վերջին՝ օրերին, Արգեն տարին լրանում էր,

ինչ նա բուժվում էր Յալտայում: Զարդուե-

ու անվրդով, ախորժելի խնսակցության հ-

զանակը՝ նա անդադար հազարով և
շումչ քաշելով պատմում էր արտասա-
նում իր բուժման, թալտայում քաշած ն-
թյունների, հիվանդովթյան սաստկա-
մասին. Հաճախակի էլ հոգնելով շատ ի-
լուց, նա նշաններով հասկացնում էր
տիկնոջը, որպեսզի նա շարունակե պա-
թյան թելը. Խնչակս երևում էր, նա ս-
բժիկությունից ձեռք էր քաշել և հույսը
միայն երկնալին բժշկի վրա. Նրա սենյ-
կախված էր Տիրամոր պատկերը, որի
վառվում էր անշեղ կանթեղը. նա նու-
չեռագրել էր Հայրիկին և նրա աղոթք-
օրհնությունը խնդրել իր համար:

1895 թվականի օգոստոսի 6-ին ինձ մոտ
եկավ Նոր-Նախիջևանցի բարեկրոն քահանա
Տեր-Միրտիշ Գանձապետյանը, որը բարե-
բախտաբար այդ ժամանակ Յալտայում էր
գտնվում, և Հայտնեց, որ ինքը գնում է Թո-
մասի տունը Հանգստյան կարգ կատարելու,
զանի որ նա գիտերը վախճանվել էր: Նրա
մահվան լուրը ինձ համար, հայտնի բան է
անսպասելի չէր. թեև նա մեկ-մեկ ման էր
գալիս, ծովափի իջում, կաթ խմելու համար
նստում ծովի վրա կառուցված պավիլիոննե-
րից մեկում ու ասում էր, որ իրեն լավ է ըգ-
գում և համարյա միշտ նստած էր լինուա
դուրս՝ յուր բարձրադիր բնակարանի գեղա-
տեսիլ պատշհամբում, բայց ամեն բանից
երևում էր, որ նրա օրերը հաշված էին: Հան-
գուցյալը հուկսի շոգերից փախչելով իր
կյանքի վերքին օրերին դնացել էր Յալտայի
շրջակայքում գտնվող լեռնային հովատնե-
ամառանոցներից մեկը— Խատի Այսողե է
հենց նա մի փոքր մրսիկով զգացել էր վերա-
հաս մահը ու խնդրել իրեն ետ տանել շու-
տով իր տունը, կնոց ու երեխաների մոտ:

Տեղ Հասնելով հանգույցյայի դագաղը շըր-
ջապատված գտանք յուրայիններով ու օտար-
ներով։ Ո՞վ ասես, միայն, որ այդտեղ Ալ-
ներ, և՛ օտարազգիներ, և՛ յալտարանակ հա-
յեր, և՛ Հայաստանի զանազան կողմերից ե-
կած երգնկացի, սպերցի, խարբերդցի, խը-
նուացի, բոլորը, բոլորը համբավել էին օրհ-
նյալ հայի հիշատակը Հարգելու Ամեն ինչ
կարգին էր։ Ցայտայի փակված աղոթարա-

ВЕЧНЫЙ ВОПРОС

Поведай мудрый Дух Исаа,
Сними завесу смерти ты,
Ужель есть жизнь еще за гробом?
Иль это—лишь одни мечты?

Նից բերվեցին Հոգևոր տխուր արարողության
համար անհրաժեշտ իրերը՝ խաչ, շուրջառ,
բուրգառ. քահանա կար, իսկ տիրացություն
էր անում տաճկական արհավիրքներից Ղրիմ
փախած երզնկացի ուսուցիչը:

Իր ողջ կյանքը օտարության մեջ անցկացրած, հայ կյանքի, հայ լեզվի, հայ ժամասցության կարուտ հանգուցյալը գոնե մի բանով բախտավոր էր, որ նրա տիտոր արարողությունը կատարվում էր իր սիրած հայրենակիցներով շրջապատված ու նրա վրա կարգացվող աղոթքները հայ եկեղեցու հոգեշտման աղոթքներն ու մրմռնաներն էին:

Մահվան երրորդ օրը հանգուցյալի դագաղը կնքվեց և մի երկրորդ մետաղյա դագաղի մեջ ամփոփվելուց հետո, ամբացվեց փայտյա արկղի մեջ ու ուղարկվեց Հաշտարիսան, որովհետև հանգուցյալի այրին ցանկացավ նրա մարմինը հողին հանձնել հայրենի քաղաքում։ Եատ ժամը տպավորություն թողեցիմ վայ այն բռպեն, երբ նավի շղթաները շառաչելով դագաղի արկղը, իրեւ ապրանքի հասարակ մի հակ, վեր քաշեցին, ևս երկար ժամանակ կանգնած հետևում էի հեռացող նավի հետովզհետեւ փոքրացող ճրագների մարող լուսին ու ինքս ինձ մտածում։ — մահվանցումերիս կյանքն էլ մի ճրագէ, որ քանի դեռ զորություն ունի, վասկում ու բռպուքում է, իսկ հենց որ վերջանում է զորությունը, կամաց կամաց պլավում է ու մարում... Թոմասի կյանքի ճրագը սովորական ճանապարհով, սպասվելուց հանգավ։ Նա մարեց այն հանկարծակի փոթորկից, որ անակնկալ կերպով տեղի ունեցավ նրա կյանքում — նա դեռ շատ ժամանակ ուներ ճրաբորբոք փառվելու, պայծառ լուս տարւ, նրա մարելու դեռ ժամանակը շեր։

Թումասը մեռնելոց առաջ ինձ մի թանկա-
գին հիշատակ թողեց. դա մի ոչ անարժեք
ոտանափոր էր, «Եթու վօրոք» խորագրով,
որ նա գրել էր Խարում. Այս ոտանափորի
մեջ ամփոփված են նրա տառապալից կյան-
քի վերջին օրերի խոհերը ու մտորումները
մահվան մասին. Ստորև տալիս ենք այդ ո-
տանափորի ոռաերթն բնագիրը ու նրա հա-
յերին թարգմանությունը:

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Խոսի՛ր, իմաստուն ոգի Խարի,
Թաց վարագույրը դու դաժան մանվաճ
Կա՞ արդյօֆ, ասա՞ կյանք անդրաշխարհի,
Թե՞ աղյ մի դատարկ երազ է միալի:

Дух, молни мы, толпа больная,
Чья жизнь висит на волоске,
Чьи интересы в жизни этой,
Как дом, стоящий на песке!...

Ведь все пропало, все исчезло
От нас, что радует людей,
Мы—часть непрощенной планеты.
Лишь зло—незримое на ней.

Ничто не вяжет нас с Землею
Холодны мы к ее судьбе...
Манят нас высы голубые
Влекут таинственно к себе!

Утешь нас, добрый Дух Исаа,
Погладай тайну смерти нам,
Ведь здесь конец страданий наших
Начало вечной жизни там?...

Но Дух молчит, молчит упорно
Лишь ветерок в лесу шумит,
Да с неба месяц золотистый
На нас насмешливо глядит.

Как будто шепчет: тщетно ждете,
Милльоны лет пройдут... Но, ах!
Так и сойдут со сцены люди,
С вопросом вечным на устах!...

Լ. Տ.

«Исаар», близъ Ялты.

30 июля 1895 г.

Աղորում է հիվանդ մի քազմություն,
Ում կյածել միայն մազից է կախված,
Ով այս աշխարհում՝ ինչպես խարխով տուն,
Որ չոր ավազի վրա է շինված:

Զէ՝ որ բոլոր կորակ անհարկի,
Հեռացավ մեզնից ամեն ուրախ քան,
Մենք՝ մասն ենք անկոչ այս մոլորակի,
Սեսես է այնտեղ շարիմը միայն:

Մեզ հողին արգեն ոչինչ չի կապաւ,
Երա քախափ դեմ սառն ենք, անտարեր,
Լուր քարձունեներն են մեզ հրապուրում
Ու խորեցավոր գրավում վեր:

Սփափի՛ր, քարի ոզի խարի,
Բացահայտիր մեզ զաղտնիքը մահվան.
Չե՝ որ այստեղ վերջն է տաճաբեների,
Այնտեղ նոր սկիզբ— կյանք հավերժական,

Բայց լուր է ոզին: Եվ լուր համաս:
Սղմկում է լոկ քամին անտառում.
Եվ լուսինն է մեղմ, կարծես ծաղրարա
Երկինի քարձունքից մեզ վրա նայում,

Շշնջում կամաց.— սպասում եմ զուր,
Միլիոն տարիներ կանցնեն... ախ... կրկին
Կանցնեն այս քեմից մարդիկ ամենուր,
Հավերժական նարցն իրենց շրունքին:

Պ. Փ.

Խար, Ֆալտայի մատ

Հունի 30, 1895 թ.

